ներկայությամբ հաշիվ տամ: Ապա դարձավ Մկրտչին և բազում հայհոյանքներով ասաց՝ այդ երեք հարյուր քառասուն թումանը, որ ինձ ես տվել, քո Վարդ կնոջ գինն է: Ապա ցասումով լցվեցին նաև գյուղացիները և նույն Մկրտչին ուղարկեցին խանի մոտ: Նա գնաց և խանի հետ խոսեց երես առ երես, քանզի նախապես ծանոթ էր նրան պարսկերեն խոսելու հետևանքով:

Եվ առնելով Գուլնազար անունով բնիկ պարսիկ մի ոստիկան, որ թուրքերեն չգիտեր. սա պատվեր էր ստացել խանից տանուտերության հաշիվ պահանջել, իսկ եթե նրա վրա որևէ բան մնա, կկախես նրան (ասել է խանը), բրածեծ կանես և առնելով կտաս գյուղացիներին:

Գուլնազարը եկավ, կանչեց տանուտերին հրապարակի ատյանը և ասաց՝ երեք հարյուր քառասուն թումանի հաշիվը ներկայացրու: Իսկ տանուտերը ինչ որ ասաց, նրանք հաճույքով ընդունեցին: Մնաց վաթսուն թումանը, չկարողացավ իմանալ, թե ինչ է արել: Գուլնազարը ասաց՝ արդ՝ հատուցիր վաթսուն թումանը, իսկ տանուտերը լռեց: Ապա բերին անիվ, գցեցին պարանոցը և կախեցին բարձր պատից և երկու կողմից ծեծելով ասում էին՝ տուր վաթսուն թումանը: Իսկ նրա ազգականները աղաչեցին գյուղացիներին՝ ինչ որ մի մաս զիջել, և նրանք զիջեցին երեսուն թումանը, իսկ մնացած երեսունը պահանջում էին և կախել խիստ սաստիկ ծեծում էին: Իսկ նա անճարացած ասաց՝ ես չորս որդի ունեմ և մի գեղեցիկ դուստր, նրանց թող խանը առնի և ինձ ազատի:

Գուլնազարը իջեցրեց նրան կախաղանից և պահ տվեց նրա եղբայր Առաքել քահանային և ասաց՝ պահիր դրան, որ չփախչի, մինչև գնամ խանի մոտ: Եվ գնաց, հայտնեց խանին Ամիրջանի խոսքը: Խանը բարկացած ասաց՝ մի՞թե նա իմ դրամն է վատնել, որ ես նրա որդիներին ու դստերը առնեմ: Այժմ թող տա քանաքեռցիներին և ազատվի, իսկ դու այնպես արա, ինչպես ասացի:

Եվ նա գնաց, կախեց նրան. և այստեղ դու տես նրա չարչարանքները, որովհետև այնքան խփեցին ոտքերին, մինչև որ տասը եղունգները թափվեցին, և ուռուցքը բարձրացավ ծնկից վեր: Վեց օր այդպես սաստիկ ձաղկեցին նրան: Զատկից հետո հիսունքի (հիսուն օրվա) չորրորդ շաբաթն էր, նրա պատժի յոթերորդ օրը, կեսօրին ամպ եղավ արեգակի տակ, երկիրը մթնեց, եղավ ինչպես

գիշեր, ամպը գոռաց ու ճայթեց, փայլատակում և կայծակ եղավ, անձրև եկավ և հավի ձվի չափ մեծամեծ կարկուտ եկավ, ամենքը, որ այնտեղ (պատժավայրում) էին, փախան, մնաց միայն Ամիրջանը կախաղանից կախված, կարկուտի տակ: Ապա եկավ Խանսոլթան անունով մի կին, որ Մկրտչի հորեղբոր դուստրն էր, ոտքի կապերը քանդեց, նրա առջև դրեց կոշիկները և ասաց՝ գնա, փախիր: Նա գնաց ջրբաժան տեղը, որ կոչվում է Կրունք. այնտեղ նրան պատահեց Առաքյալ անունով մի մարդ, ջարդեց (պարանոցի) անիվը, իսկ Ամիրջանը փախավ մինչև Աղստև ու ազատվեց:

ԳԼՈՒԽ Գ
ՄՈՒՐԱԴ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐԵՎԱՆ ԳԱԼԸ

Ամիրջանի պատմությունը այն բանի համար առաջ դրինք, որովհետև խոնդկարի (թագավորի) Երևան գալը նրա պատճառով է լինում, քանզի հազար ութսուներեք (163) թվին Հունաստանի վաճառականները եկան և ասացին խանին, թե օսմանցիք զորաժողով են արել. ոմանք ասում են՝ գնանք Բաղդադ, ոմանք՝ Երևան, իսկ ոմանք էլ՝ Իլով*, բայց ճիշտը մենք չիմացանք: Իսկ խանը ավագանուն ասաց՝ մի մարդ գտեք, որ ուղարկենք օսմանցիների երկիրն իբրև լրտեսի: Ասում են, թե տանուտեր Ամիրջանը խիստ հմուտ ու տեղյակ է այն երկրին: Խանը քանաքեռցիներին ասաց, որ գնան Ամիրջանին բերեն: Քանաքեռցիները նրան նամակ ուղարկեցին, բերին, և առան տարան խանի մոտ: Խանը նրան ճանապարհածախս, ձի տվեց և ասաց՝ գնա Ստամբոլ և իմացիր, թե ուր է կամենում գնալ խոնդկարը (Թուրքիայի թագավորը), և մեզ տեղեկություն բեր:

Ամիրջանը հեռացավ խանից և պատրաստվեց գնալ: Իսկ Մուրադ բեկը խանից գաղտնի առավ նրան և տարավ իր կացարանը և նրան չորս կնքած նամակ տվեց, որոնցից մեկն ուղղված էր խոնդկարի անվան, մյուսը՝ փոխարքայի, երրորդը՝ սպարապետի, իսկ չորրորդը՝ մեծ իշխանի: Նրանց մեջ գրված էր, թե ես լսեցի ձեր շարժման մասին, որ կամենում եք պատերազմ գնալ: Ոչ մի տեղ մի

* Լվով: